Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Համագործակցային, հաղորդակցական եւ ինքնաճանաչողական կարողությունների զարգացումը 6-9-րդ դասարաններում eTwinning հարթակի օգնությամբ
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Նարինե Համազասպի Մելքոնյան Անգլերենի ուսուցիչ Անգլերեն 3-12-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	ՀՀ Կոտայքի մարզի '''<<'Նորգյուղի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ ՀՀ Կոտայքի մարզ գյուղ Նորգյուղ, 1-ին փողոց, 14/1 Norgyugh.schools.am

Բովանդակություն (1 էջ)

Ցանկացած երկրի զարգացման կարևոր գործոնը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը: Կրթական համակարգի վրա մեծ ազդեցություն է ունենում հասարակական ցանկացած փոփոխություն, բարեփոխում:

Հենց այս պահանջով էլ մատնանշվում է համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետության ուղիները: Համագործակցային մեթոդների կիրառման նպատակն է զարգացնել սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունները, այնպես էլ ինքնուրույնությունը և սոցիալականացումը: Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի որոշակի ստատուս է, որը նշանակում է համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում: Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում, որտեղ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ :

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Որքանո՞վ է արդյունավետ eTwinning հարթակը 6-9-րդ դասարանների սովորողների շրջանում համագործակցային, հաղորդակցական եւ ինքնաճանաչողական կարողությունների զարգացման գործում:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա

	հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար: Հենց այս նպատակին է ուղղված eTwinning հարթակը, որը հրաշալի հետաքրքիր նախագծերում ներգրավելու համար: Նախագծի շրջանակներում աշակերտ-ները կատարում են ինքնուրույն հետազոտական աշխատանքներ, պատրաստում տեսասահիկներ, պաստառներ, տեսանյութեր... Փորձենք պարզել հետևյալ հարցը՝ որքանո՞վ է արդյունավետ eTwinning հարթակը 6-9-րդ դասարանների սովորողների շրջանում համագործակցային, հաղորդակցական և ինքնաճանաչողա-կան կարողությունների զարգացման գործում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Սովորել, սովորեցնելու, ինքնաճանաչողության
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Համագործակցային, հաղորդակցական եւ ինքնաճանաչողական կարողունակությունների զարգացումը

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Օտար լեզուների ուսուցման նպատակի ճանաչողական կողմը կապված է այնպիսի կատեգորիաների հետ, ինչպիսիք են՝ գիտելիքը, մտածողությունը և հասկանալու գործընթացները, որոնք ներգրավված են սովորողի՝ օտար լեզվին ծանոթացնելու, ժողովրդի մշակույթի մեջ: Օտար լեզուների ուսուցման նպատակի ճանաչողական կողմի էությունը որոշելիս կարևոր է ելնել այն գիտակցումից, որ լեզուն արտացոլում է հոգեբանական, հաղորդակցական, գործառական և մշակութային գործոնների փոխազդեցությունը: (Ա. Զենկի, 1997, էջ 340-369): Աղբյուրը՝ **https://muegn.ru/hy/istoriya/kognitivnyi-aspekt-kognitivnyi-aspekt-obucheniya-kognitivnyi-podhod-k.html © muegn.ru** Աշխարհի անհատական պատկերի ձևավորման գործընթացում օտար լեզու ուսումնասիրող սովորողը հիմնվում է, առաջին հերթին, սեփական մշակույթի ճանաչողական միջոցների վրա (Բարանով Ա. Գ., Շչերբինա Թ. Ս., 1991),

երկրորդ՝ նոր գիտելիքների վրա օտար մշակույթի մասին, որը ձևավորվել է նրա ճանաչողության ընթացքում, և, վերջապես, սեփական մշակույթի մասին նոր գիտելիքների վրա, որն ստեղծվել է օտար մշակույթի ճանաչման ժամանակ (Դեմյանկով Վ. 3.,1995թ.—Աղբյուրը՝ **https://muegn.ru/hy/istoriya/kognitivnyi-aspekt-kognitivnyi-aspekt-obucheniya-kognitivnyi-podhod-k.html © muegn.ru**

Մեկ այլ մշակույթի ճանաչումն իրականացնում է ուրիշի՝ աշխարհի համար հատուկ ազգային պատկերն ընկալելու, այն մեկնաբանելու միջոցով՝ իր ազգային գիտակցության պատկերների օգնությամբ: Այս ճանապարհին հանդիպող անծանոթ մշակույթի հանդեպ տպավորությունը հանգեցնում է երբեմն սեփական ազգային արժեքների արժեզրկում և միամիտ հիացմունք բոլոր օտարերկրացիների նկատմամբ: Օտար լեզուների ուսուցումը կոչված է նվազեցնելու միջմշակութային հաղորդակցության նմանատիպ բացասական կողմերը: Հետևաբար, այլ մարդկանց կյանքի, վերաբերմունքի ինքնատիպության մեկնաբանությունը պետք է տեղի ունենա այն կյանքի իրադարձությունների ֆոնին, որոնց մասնակցում են դպրոցականները: Այս մոտեցումն է, որը կօգնի զարգացնել աշակերտի աշխարհայացքը և կպատրաստի նրան իրեն որպես ազգային արժեքների կրող գիտակցելու, գլոբալ խնդիրների լուծման գործում իր ժողովրդի և թիրախային լեզվի ժողովրդի

	փոխկապակցություններն ու փոխկապվածությունը հասկանալու համար:Աղբյուրը՝https://muegn.ru/hy/istoriya/kognitivnyi-aspekt-kognitivnyi-aspekt-obucheniya-kognitivnyi-podhod-k.html © muegn.ru
	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ Համագործակցային ուսուցման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը: Այն ուսուցչից պահանջում է՝ ✔ հիմնավորել տվյալ դասը համագործակցային խմբերով կազմակերպելու անհրաժեշտությունը, ✔ որոշել համապատասխան խմբեր կազմելու սկզբունքները, ձևերը, ✔ նախապատրաստել անհրաժեշտ բաշխիչ նյութեր, ✔ ձևակերպել նպատակներին համապատասխան առաջադրանքներ, ✔ ձևակերպել առաջադրանքների կատարման հստակ հրահանգներ, ✔ որոշել հանձնարարությունների համապատասխան ծավալ: Նշված բոլոր գործոնները հաշվի առնելով՝ որպես ուսուցիչ միացա eTwinning հարթակին, կազմեցինք փոքր

	խմբեր 6-9-րդ դասարանների սովորողներից, սկսեցինք աշխատել՝ հիմքում ունենալով համագործակցա-յին, հաղորդակցական և ինքնաճանաչողական կարողություն-ների զարգացման նպատակները: Աշխատանքի կազմակերպման ժամանակ հիմնական ուշադրությունս էր բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը, քանի որ այն ոչ միայն դասապրոցեսում պետք է իրականացվեր, այլ նաև արտադպրոցական աշխատանքներում: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է: Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում»: Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար

	նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային ուսուցման առավելությունները՝ eTwinning հարթակում ստեղծվեց մի նախագիծ՝ 'Արի Կորտայֆ, որին ներգրավված էին ՀՀ Կոտայֆի մարզի շուրջ երեսուն դպրոց: Այստեղ աշխատանքն սկսելուց առաջ նախ երեխաները պատրաստում են իրենց լոգոտիպը , հետո այն դրվում է քվեարկման: Այս անգամ քվեարկումն անցկացվեց երկու փուլով: Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար: Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելն այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակ-ցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք

	է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ: Այսօր մանկավարժների մեթոդական զինանոցը բավականին հարուստ է, սակայն բոլորովին այլ է դրանց կիրառությունը: Եվ ահա մեր երեխաները լծվեցին բուն աշխատանքին: Օգտագործելով ՏՀՏ միջոցները, գործիքները՝ նրանք միասին որոնեցին, մշակեցին և պատրաստեցին ու տեղադրեցին իրենց պաստառ-լոգոտիպն՝ այդ ընթացքում ստանալով ուսուցչի կողմից անհրաժեշտ ուղղորդումներ: Այնուհետև պարզապես պետք էր հետևել այն ակտիվությանը, որ նրանք դրսևորեցին քվեարկության ընթացքում: Համագործակցային աշխատանքի առավելությունները Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ

	(մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է՝ 1. Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ: 2. Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու: Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանն ուսուցման պրոցեսին: Այսպես, երեխաների ակտիվ համագործակցության շնորհիվ երեսունից ավելի դպրոցների մեջ մեկ ձայնի առավելությամբ հաղթեց մեր երեխաների պատրաստած լոգոն: Խթանումն ապահովված էր, մնում էր անցնել հիմնական գործին: Աշխատանքի նպատակը ՀՀ Կոտայքի մարզի տեսարժան վայրերը,

	հայտնի ու անհայտ տարածքները, սովորույթները, խոհանոցը, մի խոսքով մարզին բնորոշ ցանկացած գործոն ներկայացնելն էր: Փոքր խմբերով աշխատելու առավելությունները Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտներն առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Զորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվու-թյունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից: Փոքր խմբերով աշխատանքն էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը: Մեր աշակերտները 4-5-անոց խմբերով ներկայացրին հարազատ համայնքը՝ Կոտայքի մարզի Նորգյուղ գյուղը, Նորգյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին, եկեղեցու պատմությանը, ճարտարապետությանը, շրջեցին համայնքով, զրուցեցին համայնքի բնակիչների հետ, հյուրընկալեցին որոշ բնակիչների տներում, ծանոթացան համայնքին բնորոշ ծեսերի, սովորույթների հետ, խոհանոցի հետ,

	մասնակցեցին լավաշի թխման արարողությանը: Աշակերտները ընթացքում ստացել են զանազան հանձնարարություններ փորում քննարկման հարթակում, այլ համայնքների, պատմամշակութային վայրերի վերաբերյալ: Տեղեկատվու-թյունը հավաքելուց, մշակելուց հետո պատրաստեցին պաստառներ, տեսաձայնագրություն-ներ, որտեղ նրանք ներկայացնում են այն ամենն, ինչ հավաքագրել էին հետազոտության ընթացքում՝ օգնելով միմյանց, օգնության համար դիմելով նաև այդ գործին տիրապետող իրենց ավագ դասընկերներին, ուսուցիչնե-րին: Աշխատանքի ավարտին այդ նյութերը ներբեռնեցին youtube կայք: Արդյունքում ունեցանք աշակերտերի կողմից ստեղծված, մշակված ինքնուրույն պատրաստված հետազոտական աշխատանքներ՝ տեսանյութերի տեսքով: Արդյունքում ունեցանք մի վիճակ, երբ սովորողներ դարձան առավել մոտիվացված դեպի ուսումը, ինքնուրույն հետազոտություններ կատարելը, առհասարակ այս ամենը խթանում է ուսման որակի բարձրացմանը, մարդկային դրական մի շարք արժեքների ձևավորմանը: Ակնհայտ է , որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:

	Ինչ վերաբերում է դասարաններում աշակերտների մեծ խմբերին պետք է նշել, որ մեծ խմբերով ուսուցման ժամանակ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, բնութագրվելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները ✔ զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն, ✔ ձևավորում է հաղորդակցման հմտություն, ✔ աշակերտները սովորում են միմյանցից, ✔ զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը, ✔ միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում, ✔ խթանում է թիմային աշխատանքը, ✔ ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,

	✔ ինտերնետների միջոցով ամրապնդվում է աշակերտների համագործակցությունը, ✔ ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:
Օգտագործված մեթոդները, գործիքները	Ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացում, թիմային աշխատանքների իրականացում
Իրականացման ժամանակահատվածը	25.08.2 215.09. 22
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Աշակերտներ, համայնքի բնակիչներ, ուսուցիչներ: 6-9-րդ դասարանի թվով 14 աշակերտներ /երեք խումբ, յոթ աղջիկ, յոթ տղա/

Եզրակացություններ, առաջարկություններ (1-2 էջ)

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Այսպիսով, արդյունքում ունեցանք մի վիճակ, երբ սովորողները դարձան առավել մոտիվացված դեպի ուսումը, eTwinning հարթակը 6-9-րդ դասարանների սովորողների շրջանում նպաստեց ինքնուրույն հետազոտություններ կատարելուն, առհասարակ այս ամենը խթանում է ուսման

որակի բարձրացմանը, մարդկային դրական մի շարք արժեքների ձևավորմանը:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցող- ներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակ- ցությունն ստեղծում է ինքնահաստատման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակ-ցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար

	խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքն ուսուցչի նախապատրաս-տությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակու-թյան մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:
Այլ տեղեկատվություն	Նախագծի հեղինակներն են աշակերտները, մասնակիցները՝ աշակերտները, համայնքի բնակիչները, վերահսկողն ուսուցիչն է:

Օգտագործված գրականության ցանկ (1-2 էջ)

1. Գիտական հոդվածների ժողովածու ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն: Գլխ. խմբ.՝ Ն. Հակոբյան.- Եր.: Նաիրի, 2018.
2. ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ 2 0 1 9 № 1 ՊՐԱԿ Բ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
3. ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ – 2018
4. https://lib.armedu.am/files/resource/files/2022-04-11/82db36b4352c75a43f11333647fb0a22.pdf

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ

NORGYUGH SECONDARY SCHOOL

ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

https://youtu.be/HL4k8J5Vb1M

https://youtu.be/jE4iDnxKUy8